Շահութահարկը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհամուժները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի : Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ բանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա: Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ առևտրային գործառնություններից:

Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիրսված ժամկետով վարկերն ու կամխաղճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ոչ ֆիրսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Քանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայամանգրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին: Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում ղեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Ամացյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահվող, բացի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջավորման նպատակով: Առևտրային նպատակներով պահվող ակտիվներից շահույթը և վնասը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված շահույթը կամ վնասը վերածևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Ֆիրմված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Բանկի կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ համաձ հրանց գծով արժեզրկումից պահուստները:

Ուեպո համաձայնագրերով գործառնություններ

Հետզմման պայմանով արժեքորերի վաճառքի գործառնությունները (ռեպո) դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործառնություններ: Հետզմման պայմանով վաճառված արժեքորերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեքորերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզմման պայմանագրերով գրավադրված արժեքորեր»։ Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով արժեքորերի գնումը հաշվառվում է պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ հաշիվներում:

Արժեքորերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետզմման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարկեր և դեքիտորական պարտքեր

Վարկերը և դեքիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության: Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև, վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վարկերի և այլ փոխատվությունների գծով արժեզրկումից պահուստներ

Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Մասնավորապես, դեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ՝ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների: Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ռիսկերի գծով, որոնք չմայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական ինսցումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Արժեգրկումից կորուստի օրյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն գզալի ֆինանսական ղժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, գուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կլինի սնանակացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և չվճարումների վրա: Իհնայը սպիթից գնահատումս ռ ախժեգրկանս օթխցուրկ կնխխասսերը՝ գոյությունը՝ մսհատագաս գատատասս արդյուարուն այս ազտրկսերը համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեգրկման օրյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեգրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամօրտիգացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեգրկման վերաբերյալ, արժեգրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսարդյուքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեգրկման պահուստի միջոցով, արժեգրկումից ծախսը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեգրկումից ծախս չափելու համար գեղջման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Բանկը կարող է արժեգրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա` օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոխհատուցվող գումարները, հսանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեգրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյունաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեգրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևանքները չեզոքացնելու նպատակով: Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեգրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեգրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեգրկման ծախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Վերանայված վարկեր

Որտեղ հնարավոր է, Բանկն փորձում է վերանայել վարկերը, քան բռնագանձել գրավը: Սա կարող է հանգեցնել վճարումների երկարաձգումների և վարկի մարման նոր պայմանների մասին համաձայնության: Երբ վարկի պայմանները վերանայված են, վարկն այլևս չի համարվում ժամկետանց: Դեկլավորությունը շարունակաբար վերանայում է վերանայված պայմաններով վարկերը, համոզվելու համար, որ բոլոր համաձայնությունները պահպանված են և որ ապագա վճարումները կկատարվեն: Վարկերը շարունակում են մնալ արժեգրկման անհատական կամ խմբային գնահատման առարկա՝ օգտագործելով վարկի սկզբնական արդյունավետ տոկոսարդույքը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, կապիտալից վերաճակներպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի կատարվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

Վարձակալություն
Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Հիմնական միջոցներ
Հիստափան սրժոցների սրահպորը, որը ռասապատասխասուս Ե ապտրպր օասաչասս չափասրչսսրրս, սպքսսապսս չափսուս Ե ըր սպքսսապսս արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած գեղչ և արտոնություն հանվում է գնման գնից:

Հետագա ծախսերը, որոնք վերաբերում են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրման համար Բանկը սահմանում է հետևյալ նորմերը.

Հիմնական միջոցի անվանումը	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադուրյք (%)
Շենքեր	75	1,67
Կապի և հաղորդակցման միջոցներ	5	20
Համակարգչային տեխնիկա	5	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Փոխադրամիջոցներ	7	14,3
Բանկումատներ	10	10
Ոչ նյութական ակտիվներ	20	5
Այլ հիմնական միջոցներ	5	20

Հիմնական միջոցների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

Վերագնահատումներ

Քաղաքի քարտեզը

Բանկի շենքի, փոխադրամիջոցների, սարքավորումների և այլ հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում՝ Բանկի համապատասխան լիազոր մարմնի որոշմամբ կարող է կատարել դրանց վերագնահատում։ Այն կատարվում է մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից։ Ընդ որում եթե վերագնահատվում է հիմնական միջոցների միավորը, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի։ Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասին վերագնահատման պահուստում վերացրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին։

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով։ Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից։ Վերջինների որոշման անհնարինություն դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի։

Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը։

Ներգրաված միջոցներ

Քաղաքի քարտեզը

Քաղաքի քարտեզը

Ներգրավված միջոցները, որոնք ներառում են Կառավարության և Կենտրոնական բանկի, այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, թողարկված արժեթղթերը և ստորադաս փոխառությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը։ Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում։

Բաժնետիրական կապիտալ

Մովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ։ Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից։ Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար։

Շահույթի բաշխումը

Շահույթից պահուստների ստեղծումը, օգտագործումն ու շահաբաժինների վճարումն իրականացվում է Բանկի կանոնադրության համաձայն։

Կենսաթոշակներ

Քաղաքի քարտեզը

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հաստուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում։ Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են։

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, երե գոյություն ունի օրենսդրոեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաքանությունը

Փոխանակման փոխարժեքը ամեն օր հաստատվում է Բանկի Վարչության նախագահի կողմից, որի առաջարկը ներկայացվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից ֆինանսական համակարգում տիրող իրավիճակն ուսումնասիրելուց հետո:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը

Ակտիվների վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների և ՀՀՀՄ-ների մոտեցման տարբերությունները էական ազդեցություն չեն թողել:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին և բանկի խորհրդի կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը:

Ծանոթագրություն 3. Զուտ տոկոսային և մմանատիպ եկամուտներ

	30.06.25	30.06.24
Տոկոսային և մմանատիպ եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային եկամուտներ բանկի ընթացիկ հաշիվներից, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված ավանդներից և վարկերից	711,274	777,718
Տոկոսային եկամուտ հաճախորդներին տրված վարկերից և փոխատվություններից	15,027,433	11,844,320
Տոկոսային եկամուտ պարտքային արժեթղթերից	176,930	111,064
Տոկոսային եկամուտ «Ռեպո» պայմանագրերից	168,434	155,211
Տոկոսային եկամուտ մինչև մարման ժամկետը պահվող պետական տոկոսային արժեթղթերից	875,335	1,075,942
Ֆակտորինգից ստացված եկամուտներ	140,000	
Տոկոսային եկամուտներ ֆինանսական երաշխավորության պայմանագրերից		
Տոկոսային եկամուտներ ֆինանսական վարձակալությունից	115,864	40,966
Տոկոսային եկամուտներ ածանցյալ ֆինանսական գործիքներից		
Այլ տոկոսային եկամուտներ		
ԸՆԴՀԱՆՈՒՐ	17,215,270	14,005,221
Տոկոսային և մմանատիպ ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Տոկոսային ծախսեր բանկի ընթացիկ հաշիվների, բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված ավանդների և վարկերի դիմաց	(309,844)	(227,610)
Տոկոսային ծախսեր հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց	(6,075,740)	(4,316,566)
Տոկոսային ծախսեր «Ռեպո» պայմանագրերի դիմաց	(24,286)	(156,543)
Տոկոսային ծախսեր ածանցյալ գործիքներից		(4,493)
Տոկոսային ծախսեր կազմակերպության կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի դիմաց	(578,711)	(369,210)
Կառավարության վարկեր	(17,229)	(26,216)
Ֆինանսական լիզինգ	(170,879)	(125,965)
Այլ տոկոսային ծախսեր		
ԸՆԴՀԱՆՈՒՐ	(7,176,689)	(5,226,603)
Զուտ տոկոսային և մմանատիպ եկամուտ	10,038,581	8,778,618

Ծանոթագրություն 4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

	30.06.25	30.06.24
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Դրամարկղային գործառնություններից	101,332.4	131,171
Հաշվարկային ծառայություններից	1,059,295.2	1,066,212
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից,		
հավատարմագրային կառավարման գործառնություններից	6,095.1	11,941
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	212.5	5,938
Վճարային քարտերի սպասարկումից	739,968.1	871,317
Այլ կոմիսիոն վճարներ	263,537.9	239,237
Ընդամենը	2,170,441	2,325,816
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Թղթակցային և այլ հաշիվների դիմաց կոմիսիոն վճարներ	(120,722.3)	(120,012)
Վճարային քարտերով գործառնությունների գծով վճարներ	(514,626.0)	(587,777)
Երաշխիքներից, հոծարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից,		
հավատարմագրային կառավարման գործառնություններից	(8,076.1)	(6,486)
Արտարժույթով և արժեթղթերով գործառնություններից	(17,608.0)	(77,822)
Բորսայական ծառայություններ	(22,229.2)	(40,384)
Այլ կոմիսիոն վճարներ		
Ընդամենը	(683,262)	(832,481)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	1,487,180	1,493,335

Ծանոթագրություն 5. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	30.06.25	30.06.24
Առևտրային նպատակներով պահվող ներդրումներից	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Առևտրային նպատակով պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ այդ թվում պարտքային արժեթղթերից		
Առևտրային նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ		
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտ	3,073,796	3,080,859
Արտարժույթի վերազնահատումից ստացված զուտ եկամուտ		(245,086)
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	21,918	8,977
Ածանցյալ գործիքների վերազնահատումից եկամուտ		(5,070)
Ներդրումային գործառնություններից զուտ եկամուտ		
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	3,095,714	2,839,680

Ծանոթագրություն 6. Այլ գործառնական եկամուտ

	30.06.25	30.06.24
Այլ գործառնական եկամուտ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	441,197	319,940
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից ստացված զուտ եկամուտներ		62,865
Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ		
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ, այդ թվում՝ բաժնետոմսերից, պարտքային արժեթղթերից, ածանցյալներից	41,962	19,508
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ	67	
Թանկարժեք մետաղների, բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների առք ու վաճառքից ստացված եկամուտ		
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների և հուշադրամների վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	36,305	10,420
Այլ ֆինանսական կազմակերպությունների մոտ բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացված եկամուտ	1,333	9,247
Երաշխիքների և երաշխավորությունների գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններից ստացվելիք գումարներ		
Երաշխիքների և երաշխավորությունների գծով ֆինանսական կազմակերպություն հանդիսացող առևտրային կազմակերպություններից ստացվելիք գումարներ		
Բռնագանձված գրավների արժեզրկման հակադարձում		
Եկամուտներ վարձակալության տրված ակտիվից		
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ եկամուտ	103,115	
Եկամուտներ պահառության գործունեության գծով		
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ	57,232	
Այլ ակտիվների վաճառքից օգուտ		
Այլ եկամուտներ	14,545	20,150
ԸՆԴԱՄԵՆԸ	695,756	442,130

Ծանոթագրություն 7. Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ

Բանկերի նկատմամբ պահանջների գծով	Ծնթգ.	30.06.25	31.12.24
		Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	14	74,652	94,218
Պահուստին կատարված մասհանումներ		81,901	252,044
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(123,809)	(271,610)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		(41,908)	(19,566)
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		32,744	74,652

Հաճախորդներին տրված վարկերի, փոխատվությունների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	16	5,978,854	5,727,170
Պահուստին կատարված մասհանումներ		5,767,423	11,685,843
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(5,327,381)	(12,749,296)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		440,042	(1,063,453)
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		(2,338,289)	(7,695,746)
Պահուստի օգտագործում		3,208,360	6,380,609
Վերջնական մնացորդը		5,548,825	5,978,854

Մինչև մարման ժամկետը պահվող ՖԱ ՀԿ պահո	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	18	72,427	101,430
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			(29,003)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		-	(29,003)
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		72,427	72,427
Ներդրումների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան

Սկզբնական մնացորդ	18		
Պահուստին կատարված մասհանումներ			
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ			
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		-	-
Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ			
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		-	-

Այլ ակտիվների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ		108,159	151,799
Պահուստին կատարված մասհանումներ		1,151,822	2,330,915
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(629,042)	(2,374,555)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ Նախկինում հետհաշվեկշիռ դուրս գրված գումարների վերադարձ		522,780	(43,640)
Պահուստի օգտագործում			
Վերջնական մնացորդը		630,939	108,159

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով	Ծնթգ.	Հաշվետու ժամանակաշրջան	Հաշվետու ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	30	7,018	12,463
Պահուստին կատարված մասհանումներ		107,630	263,560
Պահուստին կատարված մասհանումների վերադարձ		(114,648)	(269,005)
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		(7,018)	(5,445)
Վերջնական մնացորդը		-	7,018
Պահուստին կատարված զուտ մասհանումներ		913,896	(1,161,107)
Վերջնական մնացորդը		6,284,935	6,241,110

Ծանոթագրություն 8. Ընդհանուր վարչական ծախսեր

Ընդհանուր վարչական ծախսեր	30.06.25	30.06.24
	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով*	(4,291,584)	(4,204,272)
Ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով	(16,705)	(12,187)
ծախսեր	(14,841)	(24,730)
Անձնակազմի այլ ծախսեր	(11,869)	(17,725)
ԸՆԴԱՄԵՆԸ	(4,334,999)	(4,258,914)

Ծանոթագրություն 9. Այլ գործառնական ծախսեր

	30.06.25	30.06.24
Այլ գործառնական ծախսեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Վճարված տուգանքներ և տույժեր		
Ինկասացիայի համար կատարված վճարումներ	(65,665)	(64,055)
Գովազդի ծախսեր	(497,094)	(293,095)
Ներկայացուցչական ծախսեր	(163,955)	(194,295)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	(1,114,511)	(1,010,956)
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	(8,516)	
Ավանդների երաշխավորման հիմնադրամին հատկացումներ	(223,163)	(182,364)
Գործուղման ծախսեր	(26,528)	(24,150)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(52,002)	(47,235)
Ապահովագրության ծախսեր	(62,316)	(43,464)
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(459,341)	(314,106)
Բանկի շենքերի տնտեսական պահպանության և անվտանգության գծով ծախսեր	(234,601)	(213,078)
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	(66,753)	(83,484)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(221,446)	(195,594)
Տրանսպորտային ծախսեր	(19,547)	(17,566)
Ծախսեր հարկերի (բացառությամբ՝ շահութահարկի), տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով	(589,034)	(370,556)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(52,840)	(43,101)
Համակարգչային ծրագրերի սպասարկում	(24,530)	(77,592)
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր		
Բռնագանձված գրավների արժեզրկումից կորուստներ		
Ոչ առևտրային ակտիվների և պարտավորությունների արտարժույթի փոխարկումից զուտ վնաս		
Թանկարժեք մետաղներով գործառնություններից ծախսեր		
Բարեգործական նվիրատվություններ		
Այլ ծախսեր	(396,359)	(246,908)
Ընդամենը	(4,278,201)	(3,421,599)

Ծանոթագրություն 10. Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս

	30.06.25 Հաշվետու ժամանակաշ րջան	30.06.24 Նախորդ ժամանակաշ րջան
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս		
Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից զուտ շահույթ/վնաս		
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 11. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	30.06.25	31.12.24
Շահութահարկի գծով ծախս	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,110,475	2,772,178
Հետաձգված հարկի գծով ծախս	(68,251)	(847,628)
Նախորդ տարվա շահութահարկի ճշտում		869,981
ԸՆԴԱՄԵՆԸ	1,042,224	2,794,531

	Հաշվետու ժամանակաշրջան 31.03.25	Արդյունավետ դրույթաչափ (%)	Նախորդ ժամանա- կաշրջան 31.12.24	Արդյունավետ դրույթաչափ (%)
Շահույթը մինչև հարկումը	5,790,134		11,022,441	
Շահութահարկ դրույթաչափով	1,042,224	18	1,984,039	18
Զիարկվող եկամուտներ		-		-
Զուտ չմվագեցվող ծախսեր		-	191,244	2
Այլ հարկվող եկամուտ	2,182	0		-
Հարկային դրույթաչափի փոփոխություն				-
Փոխարժեքային տարբերություն	(6,128)	(0)	8,452	0
Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտ	3,945	0		-
Նախորդ տարվա շահութահարկի ճշտում			869,981	
Նախորդ տարվա հետաձգված հարկի ճշտում			(259,185)	
Շահութահարկի գծով ծախս	1,042,224	18.0	2,794,531	25.4

0

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

		Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփա կ ֆինանսական արդյունքում ճանաչված	30.06.2025		
Հազար ՀՀ դրամ	31.12.2024			Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավո-րություն
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(14,620)			(14,620)		(14,620)
Ներդրումներ արժեթղթերում	55,895			55,895	55,895	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	(75,062)	79,098		4,036	4,036	-
Հիմնական միջոցներ	(303,629)			(303,629)	-	(303,629)
Այլ ակտիվներ	104,273	(3,864)		100,409	100,409	-
Բոնազանձված ակտիվներ	360,355			360,355	360,355	-
Այլ պարտավորություններ	133,649			133,649	133,649	-
Պայմանական պարտավորություններ	41,542	(6,983)		34,559	34,559	34,559
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	302,403	68,251	-	370,654	688,903	(283,690)

Ծանոթագրություն 12. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	30.06.25 Հաշվետու ժամանակաշրջան	31.12.24 Նախորդ ժամանակաշրջան
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ		
Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ հարկումից հետո	5,790,134	10,171,122
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	182,746,185	181,254,472
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (AMD)	31.68	56.12

Ծանոթագրություն 15. Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

	30.06.25	31.12.24
Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Կանխիկ դրամական միջոցներ	14,911,451	14,960,598
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում*	34,317,759	34,213,846
Թղթակցային հաշիվներ	15,946,245	2,791,608
Հաշվեգրված տոկոսներ		-
Հնարավոր կորուստների պահուստներ		-
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	65,175,455	51,966,052

Ծանոթագրություն 16. Ածանցյալ ֆինանսական ակտիվներ

	30.06.25	31.12.24
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Արժույթային սվոպ պայամանագիր		349
Արժույթային ֆորվարդ պայամանագիր	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	-	349

Ծանոթագրություն 17. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	30.06.25	31.12.24
Ընթացիկ հաշիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում**	300,000	595,000
Դեպոնացված միջոցներ այլ բանկերում	2,504,301	2,365,111
Բանկերում ներդրված ավանդներ	3,459,086	3,202,269
Բանկերին տրամադրված վարկեր	7,526,166	11,950,806
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	417,749	449,561
Ուսույթ, սվոպ համաձայնագրեր		
Այլ հաշիվներ	3,693,277	-
Հնարավոր կորուստների պահուստներ	(32,744)	(74,652)
ԸՆԴԱՄԵՆԸ	17,867,835	18,488,095

Ծանոթագրություն 18.Ներդրումային արժեթղթեր

	30.06.25	31.12.24
Ամորտիզացված արժեքով ներդրումային արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պետական պարտատոմսեր	17,204,883	27,166,994
Կորպորատիվ պարտատոմսեր	4,043,261	4,047,205
Ընդամենը	21,248,144	31,214,199

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր	1,225,045	1,073,505
ՀՀ բաժնային գործիքներ	750,325	750,325
Ընդամենը	1,975,370	1,823,830
Պարտքային կորուստների պահուստ	(72,427)	(62,829)
Ընդամենը ներդրումային արժեթղթեր	23,151,087	32,975,200

Իրական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով չափվող արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պետական տոկոսային արժեթղթեր	-	119,991
Ընդամենը		119,991

Ծանոթագրություն 18 Վաճառքի և հետգնման պայամանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր

	30.06.25	31.12.24
Հետգնման պայամանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
ՀՀ պետական պարտատոմսեր արժեթղթեր	1,229,272	3,476,530
Պարտքային կորուստների պահուստ	-	(9,598)
Ընդամենը հետգնման պայամանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթեր	1,229,272	3,466,932

Անձի անվանումը	Հիմնական գործունեությունը	Գրանցման երկիրը	Ներդրման ամսաթիվը	Ներդրումը (հազ. դրամ)	Բաժնեմասը %
1. ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ ՓԲԸ	վճարահաշվարկային ծառայություններ	ՀՀ	26.12.2006	12,143	2%
2.ԱՔՈԱ ՔՐԵԴԻՏ ՈԵՓՈՐԹԻՆԳ ՓԲԸ	վերաբերյալ տրամադրված տվյալների մշակում, համակարգում, արխիվացում, պահպանում և տրամադրում	ՀՀ	30.11.2007	16,500	2.50%
Ընդամենը				28,643	

Ծանոթագրություն 19. Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ

Տրված վարկեր և այլ փոխառություններ ներառյալ տոկոսներ և տույժեր	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Վարկեր	187,078,095	172,225,878
Օվերդրաֆտներ	34,460,574	30,787,338
Ֆակտորինգ, լիզինգ, այլ	7,868,354	6,506,182
Ընդամենը վարկեր	229,407,023	209,519,398
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(5,548,825)	(5,978,854)
Ընդամենը զուտ վարկեր	223,858,198	203,540,544

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ հաճախորդների	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Պետական ձեռնարկություններ	4,238	4,618
Սասնավոր ձեռնարկություններ,	52,279,375	43,569,557
Ֆինանսական հատված	417,749	449,561
Ֆիզիկական անձինք,	158,541,888	151,217,247
Անհատ ձեռնարկատերեր	18,581,522	14,727,976
Ընդամենը վարկեր	229,824,772	209,968,959
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(5,548,825)	(5,727,170)
Ընդամենը զուտ վարկեր	224,275,947	204,241,789

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների	Հաշվետու ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը	Նախորդ ժամանակաշրջան	Տոկոսային հարաբերությունը
Արդյունաբերություն	9,891,104	4.30	7,853,823	3.74
Գյուղատնտեսություն	3,083,267	1.34	2,738,745	1.30
Շինարարություն	18,573,645	8.08	16,989,962	8.09
Տրանսպորտ և կապ	983,471	0.43	874,874	0.42
Առևտուր	10,059,646	4.38	9,598,459	4.57
Սպասարկման ոլորտ	3,246,620	1.41	3,130,508	1.49
Ֆինանսական հատված	600,692	0.26	643,559	0.31
Սպառողական	89,823,079	39.08	88,434,141	42.12
Հիփոթեքային վարկեր	70,707,684	30.77	62,416,668	29.73
Այլ ճյուղեր	22,855,566	9.94	17,288,219	8.23
Ընդամենը	229,824,772	100.0	209,968,959	100.00

Ծանոթագրություն 20. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ

Հոդվածի անվանումը	Շենքեր	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմնական միջոցների գծով կապիտալ մերդրումներ	Վարձակալված հիմնական միջոցների գծով կապիտալ մերդրումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	4620319	2202484	444672	5167902		646687	13082064
Ավելացում	1554	100237	34006	260152		75564	471513
Օտարում		43256		202582			245838
Վերագնահատում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	4621873	2259465	478678	5225472		722251	13307739
Ավելացում	230374.5	163740.803	15294.9	505601.943		138383.7	1053395.846
Օտարում	143384.3	138097.883	12807.4	403991.29		19363	717643.873
Վերագնահատում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	4708863.2	2285107.82	481165.5	5327082.653		841271.7	13643490.97
Կուտակված մաշվածություն							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում	612033	1343058	87978	3234489		79950	5357508
Ավելացում	63177	45830	11053	151007		3277.78	274344.78
Օտարում		4061		69639			73700
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում	675210	1384827	99031	3315857		83227.78	5558152.78
Ավելացում	78144.66	96954.88	10747.061	245990.23		8952.139	440788.97
Օտարում	31526.73	91828.6	363	291189.237		5310.28	420217.847
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	721827.93	1389953	109415.061	3270657.993		86869.639	5578723.903
Զուտ հաշվեկշռային արժեք							
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3987035.27	895154.64	371750.439	2056424.66		754402.061	8064767.07
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3946663	874638	379647	1909615		639023.22	7749586.22

Ծանոթագրություն 21. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ

Հոդվածի անվանումը	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում 31.12.23	4,522,177	1,167,335	101,021	5,790,533
Ավելացում	368,958	287		369,245
Օտարում				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում 31.12.24	4,891,135	1,167,622	101,021	6,159,778
Ավելացում	64,501	36,543		101,044
Օտարում	126,353			
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.25	4,829,283	1,204,165	101,021	6,134,469
Կուտակված մաշվածություն	-	-	-	
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում 31.12.23	972,437	732,693	85,015	1,790,145
Ավելացում	483,675	132,110	3,146	618,931
Օտարում				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում 31.12.24	1,456,112	864,803	88,161	2,409,076
Ավելացում	174,691	76,454	1,556	252,701
Օտարում				
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 30.06.25	1,630,803	941,257	89,717	2,661,777
Ջուտ հաշվեկշռային արժեք				
Հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,198,480	262,908	11,304	3,472,692
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3,435,023	302,819	12,860	3,750,702

Ծանոթագրություն 22. Բռնագանձված ակտիվներ

	30.06.25	31.12.24
Բռնագանձված ակտիվներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Բռնագանձված գրավ և վաճառքի համար պահվող ակտիվներ	10,521,840	6,546,969
Ընդամենը	10,521,840	6,546,969

Ծանոթագրություն 23. Այլ ակտիվներ

	30.06.25	31.12.24
Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ստացվելիք գումարներ	1,171,407	2,379,010
Բանկերից ստացվելիք այլ գումարներ	-	105,621
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)		
Ղեբիտորական պարտքեր և կանխավճարներ	1,171,407	2,484,631
Խառնվարտից ստացվելիք բանկային ստանդարտացված ծուլակտորներ	207,104	170,799
Կանխավճարներ մատակարարներին և այլ ղեբիտորներ	2,358,775	1,347,811
Կանխավճարներ/գերավճար/ բյուջեի և այլ հարկերի գծով	885,633	11
Արագամաշ առարկաներ	270,483	267,031
Այլ ակտիվներ	2,806,142	424,277
Ընդամենը ղեբիտորական պարտքեր և կանխավճարներ	6,528,137	2,209,929
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (ծանոթ. 7)	(630,939)	(108,159)
Ընդամենը այլ ակտիվներ	7,068,605	4,586,401
Հետաձգված հարկային ակտիվներ		302,403
Կանխավճար շահութահարկի գծով		-
Ընդամենը	-	-

Ծանոթագրություն 24. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	30.06.25 Հաշվետու ժամանակաշրջան	31.12.24 Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հաշիվներ		
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	7,073,471	6,846,727
այլ	3,696,160	-
ԸՆԴԱՄԵՆԸ	10,769,631	6,846,727

Միջբանկային վարկեր և ավանդներ, փոխառություններ, այլ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ստորադաս փոխառություն ՀՀ կենտրոնական բանկ		-
ՀՀ կենտրոնական բանկ ռեպո (հետգնման) պայմանագրեր		
ՀՀ բանկեր վարկեր և ավանդներ,		
ՀՀ բանկեր ռեպո (հետգնման) պայմանագրեր	-	3,174,430
այլ		
ԸՆԴԱՄԵՆԸ	-	3,174,430

Ֆինանսական կազմակերպություններ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Ընթացիկ հաշիվներ	12,052,696	6,465,543
Վարկեր և ավանդներ, փոխառություններ	8,549,896	6,914,106
ԸՆԴԱՄԵՆԸ	20,602,592	13,379,649

Ընդամենը պահանջներ բանկերի և միջազգային ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	31,372,223	23,400,806
---	-------------------	-------------------

Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8,452	-
ԸՆԴԱՄԵՆԸ	8,452	-

